# Հաշիվ վավերագիր
(արտադրանքների, ապրանքների առաքման)

| [1] Դուրս գրման ամսաթիվ | | |
|---|---|---|
| 30 | Մայիս | 2019 թ. |
| **[4] Առաքման ամսաթիվ** | | |
| 30 | Մայիս | 2019 թ. |

| [2] Սերիա | [3] Համար |
|---|---|
| Բ | 8427042201 |

| Ճշգրտվող հաշիվ վավերագրի | |
|---|---|
| Սերիա | Համար |
| | |

Ճշգրտվող հաշիվ վավերագրի դուրս գրման ամսաթիվ

| Պայմանագիր | |
|---|---|
| [5] Կնքման ամսաթիվ | [6] Համար |
| 18 Հունվար, 2018 թ. | |

**[7] Լրացուցիչ տվյալներ (պայմաններ)**

**[7.1] ՀԴՄ կտրոնի համար**

### Արտադրանք, ապրանք առաքող անձի

| | |
|---|---|
| [8] Հարկ վճարողի հաշվառման համարը (ՀՎՀՀ) | 0 6 9 0 2 0 8 7 |
| [9] Ավելացված արժեքի հարկ վճարողի հաշվառման համարը | 0 6 9 0 2 0 8 7 / 1 |
| [10] Անվանումը | «ԼՈՌՈՒ ՄԱՐԶԱՅԻՆ ՀՈԳԵՆՅԱՐԴԱԲԱՆԱԿԱՆ ԴԻՍՊԱՆՍԵՐ» ՊԵՏԱԿԱՆ Փակ բաժնետիրական ընկերություն (ՓԲԸ) |
| [11] Բանկային տվյալները | "ԱՄԵՐԻԱԲԱՆԿ" ՓԲԸ — N 1570015001210100 |
| [12] Գտնվելու վայրը (հասցեն) | ԼՈՌԻ ՎԱՆԱՁՈՐ ՎԱՆԱՁՈՐ Գ. ՆԺԴԵՀԻ Փ. 57 |
| [13] Վայրը, որտեղից ապրանքները առաքվում են | ՎԱՆԱՁՈՐ Գ. ՆԺԴԵՀԻ Փ. 57 |
| [14] Լրացուցիչ տվյալներ | |

### Արտադրանք, ապրանք ձեռք բերող անձի

| | |
|---|---|
| [15] Հարկ վճարողի հաշվառման համարը (ՀՎՀՀ) (ֆիզիկական անձի անձնագրի սերիան և համարը) | 0 2 6 3 1 2 6 3 |
| [16] Ավելացված արժեքի հարկ վճարողի հաշվառման համարը | |
| [17] Անվանումը (ֆիզիկական անձի անունը, ազգանունը) | «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՆՆՉԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻ ԴԵՊԱՐՏԱՄԵՆՏ» Պետական կառավարչական հիմնարկ |
| [18] Բանկային տվյալները | ՀՀ ֆինանսների նախարարության աշխատակազմի գործառնական վարչություն — N 900011000834 |
| [19] Գտնվելու վայրը (բնակության վայրը) | ԵՐԵՎԱՆ ԱՐԱԲԿԻՐ ԱՐԱԲԿԻՐ ԹԱՂԱՄԱՍ ՄԱՄԻԿՈՆՅԱՆՑ Փ. 46/5 |
| [20] Լրացուցիչ տվյալներ | |
| [21] Ում միջոցով | Անուն, ազգանուն: |
| | Լիազորագիր — Համար: |
| | Լիազորագիր — Ամսաթիվ: |
| [22] Մատակարարման (առաքման) եղանակը | |
| [23] Մատակարարվող (առաքվող) արտադրանքների, ապրանքների նշանակման վայրը (հասցեն) | ԱՐԱԲԿԻՐ ՄԱՄԻԿՈՆՅԱՆՑ Փ. 46/5 |

**[24] Մատակարարվող արտադրանքների, ապրանքների քանակի և վճարման ենթակա գումարի հաշվարկը**

| N | Առաքվող արտադրանքի, ապրանքի անվանումը | Չափի միավորը | Քանակը | Միավորի գինը | Զեղչ(%) | Արժեքը | Այդ թվում՝ ակցիզային հարկ | Այդ թվում՝ բնապ. հարկ |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 | 9 |
| 1 | Դատահոգեբուժական փորձաքննությունների փորձագիտական եզրակացություն թիվ 55151719բ/գ. | հատ | I | 39400 | | 39400 | | |
| Ընդամենը | | | | | | 39400 | | |

Առաքող՝ KALANTARYAN GAYANE 7203510093
(անունը, ազգանունը)

Ստացող
(անունը, ազգանունը)

30/05/2019 16:53:03

## ՈՐՈՇՈՒՄ

*Ամբուլատոր դատահոգեբուժական փորձաքննություն նշանակելու մասին*

27 մարտի, 2019թ.

ք. Ալավերդի

ՀՀ քննչական կոմիտեի Լոռու մարզային քննչական վարչության Թումանյանի քննչական բաժնի ավագ քննիչ Դ.Խաչատրյանս, վերանայելով վարույթիս թիվ 55151719 քրեական գործի նյութերը.

## ՊԱՐԶԵՑԻ

ՀՀ քննչական կոմիտեի Լոռու մարզային քննչական վարչության Թումանյանի քննչական բաժնում քննվող 2019 թվականի փետրվարի 18-ին ՀՀ քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 3-րդ կետերով /2 դրվագ/, ՀՀ քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով նախատեսված հանցագործության հատկանիշներով հարուցված թիվ 55151719 քրեական գործի նախաքննությամբ ձեռք բերված բավարար ապացույցների համակցության հիման վրա 2019 թվականի մարտի 08-ին ՀՀ քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 3-րդ կետերով և ՀՀ քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 3-րդ կետերով առաջադրվել է մեղադրանք այն բանի համար, որ նա նախապես տեղյակ լինելով, որ Ալավերդի քաղաքի բնակիչ Լևոն Նալբանդյանը նույն քաղաքի Բաղրամյան 10 շենքի հարակից այգում գտնվող այգետնակում ունի օդի թորելու համար նախատեսված պղնձի կաթսա, ուրիշի գույքի գաղտնի հափշտակություն կատարելու շուրջ նախնական համաձայնության գալով համաքաղաքացի Արմեն Դալաքյանի հետ, 2018 թվականի նոյեմբեր ամսին՝ գործով չպարզված օրը, գիշերը մետաղյա ցանկապատի վրայով բարձրանալու եղանակով ապօրինի մուտք է գործել վերը նշված այգի, ձեռքերով հրելու միջոցով հանել է այգետնակի մուտքի դռան ստորին հատվածում առկա փայտե տախտակները, ապօրինի մուտք է գործել որպես պահեստարան հանդիսացող այգետնակ և այնտեղից գաղտնի հափշտակել Լևոն Նալբանդյանին պատկանող զգալի չափերով՝ շուրջ 400.000 ՀՀ դրամ ընդհանուր արժողությամբ օղի թորելու համար նախատեսված պղնձի կաթսան՝ իր կափարիչով:

Բացի այդ, Մանվել Իսոյանը նախապես տեղյակ լինելով, որ համաքաղաքացի Ատոմ Սիմոնյանն իր տան բակում ունի օղի թորելու համար նախատեսված պղնձի կաթսա, ուրիշի գույքի գաղտնի հափշտակություն կատարելու շուրջ նախնական համաձայնության գալով Գևորգ Կիրակոսյանի հետ, 2019 թվականի փետրվար ամսին՝ գործով չպարզված օրը, գիշերը օգտվելով Ատոմ Սիմոնյանի՝ Ալավերդի քաղաքի Զորավար Անդրանիկ 237 հասցեի տան դարպասների բաց լինելու հանգամանքից,ապօրինի մուտք է գործել բակ և տան 2-րդ հարկի պատշգամբի տակ գտնված բացօթյա տարածքից գաղտնի հափշտակել է նրան պատկանող զգալի չափերով՝ 110.000 ՀՀ դրամ ընդհանուր արժողությամբ օղի թորելու համար նախատեսված պղնձի կաթսան՝ իր կափարիչով:

Պարզվել է, որ Մանվել Իսոյանը 2010 թվականից հաշվառման մեջ է գտնվում <<Ալավերդու բժշկական կենտրոն>> ՓԲ ընկերության հոգենյարդաբանական կաբինետում <<Կնի ռեզիդուալ օրգանական ախտահարում, մտավոր հետամնացություն>> ախտորոշմամբ և հաշմանդամ է անժամկետ:

Նկատի ունենալով, որ մեղադրյալ Մանվել Իսոյանի հոգեկան վիճակի, նրա մոտ հոգեկան հիվանդության առկայության, մեղսունակության հարցը և գործի համար նշանակություն ունեցող այլ հարցեր պարզաբանելու համար անհրաժեշտ է դատական հոգեբուժության

բնագավառի մասնագիտական գիտելիքներ, ուստի ղեկավարվելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 243-244-րդ և 248-րդ հոդվածների պահանջներով.

**ՈՐՈՇԵՑԻ**

1. Սույն գործով նշանակել ամբուլատոր դատահոգեբուժական փորձաքննություն, որի կատարումը հանձնարարել <<Լոռու մարզային հոգենյարդաբանական դիսպանսեր>> ՊՓԲ ընկերության փորձագետներին:

2. Փորձաքննության ներկայացնելսույն որոշման օրինակը, իսկ քրեական գործի նյութերը և մեղադրյալ Մանվել Խոյանը կներկայացվեն փորձաքննության անցկացման օրը:

3. Պարզաբանման համար փորձագետներին առաջադրել հետևյալ հարցերը.

ա/ Մանվել Խոյանը քրոնիկ հոգեկան կամ այլ հոգեկան հիվանդությամբ տառապել կամ տառապում է, թե ոչ, եթե՝ այո, ապա ինչպիսի:

բ/ Եթե Մանվել Խոյանը տառապել է հոգեկան հիվանդությամբ կամ ունեցել է հոգեկան գործունեության ժամանակավոր խանգարում, ապա վերոհիշյալ դեպքի պահին դրանք զրկել են նրան իր գործողությունների համար իրեն հաշիվ տալու և դրանք ղեկավարելու ընդունակություններից, թե ոչ:

գ/ Վերոհիշյալ դեպքի պահին Մանվել Խոյանն ունեցել է արդյոք հոգեկան գործունեության ժամանակավոր խանգարում, թե ոչ:

դ/ Վերոհիշյալ դեպքի պահին Մանվել Խոյանը եղել է արդյոք մեղսունակ, թե ոչ, նա հարկադիր բուժման կարիք ունի, թե ոչ:

ե/ Կարելի է արդյոք արժանահավատ համարել Մանվել Խոյանի կողմից տրված ցուցմունքները:

զ/ Իր հոգեկան վիճակով պայմանավորված՝ Մանվել Խոյանն ի վիճակի է մասնակցել դատաքննչական գործողությունների, թե ոչ:

է/ Իր հոգեկան վիճակով պայմանավորված՝ Մանվել Խոյանը հասարակության համար վտանգ ներկայցնում է, թե ոչ

4. Փորձագետներին խնդրել պատասխանել նաև այն հարցերին, որոնք թեև առաջադրված չեն սույն որոշմամբ, սակայն կառաջանան փորձաքննության ընթացքում, կմտնեն փորձագետների իրավասության մեջ և որոնց պարզաբանումը կարող է նշանակություն ունենալ փորձաքննության լիարժեքության ապահովման համար:

5. Փորձագետին պարզաբանել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 85-րդ հոդվածով նախատեսված նրա իրավունքները և պարտականությունները, միաժամանակ փորձագետին նախազգուշացնել ՀՀ քրեական օրենսգրքի 338-339-րդ հոդվածներով նախատեսված քրեական պատասխանատվության մասին:

Փորձագետին նախազգուշացնել նրան տրամադրված քրեական գործի, նյութերի, իրեղեն ապացույցների պահպանության նկատմամբ անփութություն ցուցաբերելու հետևանքով դրանց կորստի, ոչնչացման կամ հափշտակվելու դեպքում ՀՀ քրեական օրենսգրքի 315-րդ հոդվածով նախատեսված հնարավոր պատասխանատվության մասին:

**Ավագ քննիչ՝ Դ. Խաչատրյան**